

որ չընկած հիւանդացի են 9, առողջացել է 1, մեռել են 8, մնացել են 71 հոգի:

Օգոստոսի 22-ին թիֆլիսում խօշորային հիւանդացիներ չեն եղել, զինուորական հիւանդանոցում փոփոխություն չէ եղել, կային 5 հիւանդներ: Օգոստոսի 23-ին խիբուրիական բաժնին է փոխադրված 1 հոգի, մնացել են 4 հոգի:

Գործում առողջացել են 3, մնացել են 2 հոգի: Բորժոմում կային 2, Յիվուր-Վարկում մեռել են 2, կրկին հիւանդացի են կացել զ. 1, Գվելի զ. 1, Ստարիկարդի զ. մեռել է 1, ձալա զ. հիւանդացի են 2 հոգի: խիբուրիական գիւղամասում նոր հիւանդացիներ չեն եղել:

Ախալքալաքում օգոստոսի 19-ին կային հիւանդներ 15, հիւանդացի են 28, մեռել են 31, առողջացել են 2, կրկին հիւանդացի են մնացել են 32: Տամանիան գնդում մեռել են 14, մնացել են 30 հոգի: Երկու օրվա ընթացքում հիւանդությունը սաստկացաւ: Բաղրաբէ չէ կարողանում միջոցներ տալ:

Միլիտերի գաւառում հիւանդացի են 8, մեռել են 7, Գրակայում կային 29, հիւանդացի են 51, առողջացել են 17, մեռել են 19, մնացել են 44 հոգի:

Գորա գաւառում հիւանդացի են 10, մեռել են 4, մնացել են 7 և առողջացել են 10: Օգոստոսի 20-ին երկաթուղային հիւանդանոցի խօշորային բաժնից դուրս դնաց 1 կին:

Ախալքալաքից ստացված հեռագրից երևում է, որ գիւղերում հիւանդացի են 136, առողջացել են 38, մեռել են 69, մնացել են նոր հիւանդացիներ հետ միասին 112, Ախալքալաքի քաղաքում հիւանդացի են 2, մեռել են 2, մնացել է 1 հիւանդ:

ԿՐԻԿՆ ԷՖԱՆԱԳԻՆ ԶԱՇՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Մենք առիթ ունեցանք լսելու թիֆլիսում գաւառացի շրջանների մարդկանց կարծիքները էփանադին ճաշարանի մասին, և ուրախութեամբ կարող ենք արձանագրել, որ ամենքն էլ, առանց բացառութեան, մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի էփանադին ճաշարան:

Մենք առիթ ունեցանք անձամբ լսելու և այն բաղմամբ աղբատնիքից շատերի կարծիքը, կամ առելի լաւ է տակ աղբատնիքը, որոնք այժմ ահապի թիֆլիսում են զգում իրանց ողորմելի կեանքի մէջ, ստանալով թէյ, չաքալ, ճաշ, պատրաստի թէյ, մաքուր ջուր և այլն, և որոնք լսած լինելով թէ մօտաւորապէս մի ամսից յետոյ պիտի փակվին ձրի թէյատնիքը և ճաշարանները, արտասուք աչքերին հարցնում են. «Ո՞րք ուրախութեամբ մի բաժակ տաք թէյը և մի աման տաք կերակուրն էր, այս էլ որ չը լինի ինչ պիտի անենք»:

Արձանագրելով մի կողմից հասարակութեան ունեւոր դասակարգի համակրութիւնը դէպի էփանադին ճաշարաններն իննելու, և միւս կողմից արքայութեան դասակարգի արտասուքը, մենք ուզում ենք չնշտել այն կէտի վրայ, որ ուրեմն սկզբունքով վճռված կարելի է համարել էփանադին ճաշարանների գոյութեան խնդիրը թիֆլիսում: Եւ դա չնշտելու արժանի կէտ է, քանի որ օրանից մի երկու ամիս առաջ, մեր քաղաքում խօշորային սկսվելու, շատ շատերը ոչ թէ միայն սպէտ, այլ և ծիծելով անձինք, դէմ էին էփանադին կամ ձրի ճաշարաններին և ձրի թէյատնիքին մտքին, ասելով թէ «ըրբեք միայն ժողովրդին ենք փչացնում, վարժեցնելով նրան պարսկական և ձրիակերութեան», և այժմ այդ նոյն մարդիկ, այդ նոյն պիտիւնները, արդէն ուրիշ կերպ են խօսում, և համակրութեամբ են վերաբերվում դէպի ժողովրդին օրնելու այդ տեսակ միտքը: Ինչպէս օրինակ, էփանադին ճաշարանի հիմնելու:

Մենք էլ այժմ մտածել ուրեմն հարցի գործնական կողմը վրայ:

Այդ գործնական կողմը կարօտ է մանրամասն մշակութեան, և մենք խոստանում ենք «Մշակի» միջոցով մի մանրամասն մշակված ծրագիր ներկայացնել էփանադին ճաշարանների վերաբերմամբ:

Առ այժմ հարկ ենք համարում միայն մի թիւթին հաշիւ առաջ բերել: Օրինակ, թիֆլիսի Հաւաքար թաղում, որ արքայապետի անապին բաղնիքին կայ, մի էփանադին ճաշարան պահելու համար, որ կարողանային կերակրել օրեկան 400 մարդիկ, հարկատու է միջին թիւով տարեկան 5500—6000 ռուբլի: Մեր հաշիւով այդ 6000 ռուբլուց մօտ 3500 ռուբլի կը գոյացվի այն վճարից, որ պէտք է տայ խրաբանչիւր որ ճաշարանից կերակուր ստանալու համար (չը հաշվելով 20% ձրի ճաշարաններին, այսինքն անպայման աղքատներին): Այդ վճարը կը լինի 5 կոպէկ, կամ մի քիչ աւելի:

Տարեկան 6000 ռուբլի ծախսից՝ այդպիսով ճաշարանը կը ծածկի 3500 ռուբլին: Մենք էլ հարկ մնացած 2500 ռուբլին: Գուցէ լինեն մարդիկ, որոնք դժուար համարեն մի այդ տեսակ հիմնարկութեան համար տարեկան 2500 ռուբլի գումար: Սակայն, ի նկատի ունենալով էփանադին ճաշարանի կարևորութիւնը, հասարակութեան համակրութիւնը և այն, որ նախաձեռնողները զարծ կը դնեն մի յայտնի աշխատանք և ևս ունեւոր, իրաւունք կայ կարծելու, որ այդ 2500 ռուբլու դէֆիցիտը կարելի է ծածկել առանց մեծ դժուարութեան:

Մենք գիտենք Հաւաքարում ապրող շատ համակրելի, դիմաւոր ունեւոր անձինք, որոնք խոստանում են տարեկան 1000 ռուբլի հաւաքել յօգուտ ճաշարանի՝ Հաւաքարի ունեւոր (մեծ մասամբ իրենցինքն) փայտ, միս, բրինձ) հասարակութիւնից: Մենք էլ ուրեմն 1500 ռուբլին: Եթէ մեր բարեգործական ընկերութիւնները յանձն առնեն տարեկան 500 ռուբլի իրանց կողմից տալ, մնացած 1000 ռուբլին կարելի է հանգանակել թիֆլիսում մեծ հեշտութեամբ, կամ ուղղակի մասնաւոր հանգանակութիւն բանալով կամ ներկայացուցնելով և երկուցորդերը դիմելով, և կամ մշտական, մի յայտնի վճար տուող անհատներ գտնելով:

Մի բան միայն պէտք է յիշել և միշտ չորսնորդել, այն է, որ այդ տեսակ փորձ ծախսով մենք կապահովենք չորս-հինգ հարկուր աղքատ, քաղցած, անօգնական, մերկ և յուսահատ մարդկանց....

Խ. Մ.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուսումնարաններում ուսումը սկսվում է մեր երկրի ամեն տեղերում սովորաբար սեպտեմբեր ամսից, իսկ աշակերտների ընդունելութիւնը կամ հարցաքննութիւնները մինչև անդամ աւելի չուտ, այն է օգոստոսի 20—25-ից: Հապիւ ուրեմն մէկ շաբաթ է մնում մինչև ուսումնական տարւոյն նի սկզբնաւորութիւնը: Ներկայ աղետի ժամանակ, երբ մեր երկրի ամեն սեփականները վարակված են խօշորային և մի քանի տեղերում այդ ախտը դեռ նոր է սկսվել, փոստաւորներ պէտք է համարել ուսումնարաններում ուսումը շուտ սկսելու: Պետական դպրոցների համար, ինչպէս տեղեկանում ենք լրագրողներից, կարգադրութիւնը եղել է արդէն: Պէտք է ուրեմն մեր ծխական և թեմական հոգևոր դպրոցների վերաբերմամբ ևս օր առաջ մի տնօրէնութիւն անել: Մինչև օրս ոչ միայն զրաւ ամսին պաշտօնապէս ոչինչ չը հայտնուի, այն ինչ աւելի աշակերտ է արագ պէտք է լինի ապսպար խնդիրների վերաբերութեամբ ներկայ պարագայներում:

Առ այժմ հիւանդութիւնը շարունակվում է մէկ շաբաթից յետոյ ուսման պարագայունքները պիտի սկսվեն մեր դպրոցներում և դեռ ոչինչ որոշում չէ եղած այդ մասին: Իսկարծիքով, նկատի ունենալով մանուկների ապահովութեան հարցը, այս տարի հոկտեմբերից աւելի շուտ չը պէտք է սկսել կանոնաւոր ուսումը: Կամ տնօրինել, որ այն տեղերում, որ հիւանդութիւնը լիովին դադարել է՝ ուսումը սկսել, իսկ որտեղ նա շարունակվում է, անդամ թիւթի կերպով, դեռ չը սկսել:

Իրայայտ ենք, որ այս կարևոր խնդրի մասին շուտապիսով մի որոշում կանէ ա. էլ միայն Մի-նոյրը:

Ղարաջ:

ՆԱՄԱԿ ՊԵՏՈՎՍԿԻՑ

Պետաւոր 130-ին

Վերջապէս մենք ևս կարող ենք այժմ փորձ ինչ աղտոտ շունչ քանչև խօշորային մեղանում եթէ չէ անհետացել բոլորովին, դեռէ այնքան թուլացել է, որ էլ արտասի չէ յարցանում ժողովրդի մէջ: Հիմա օրը 1 կամ 2 դո՛ւ ենք ունենում, պատահում է, որ ոչ ոք չէ մեռնում, բայց այդպիսի օրերը թիւերը հիւանդութեան են: Պաշտօնական ճիշդ թիւերի հիման վրայ կարող եմ ասել, որ ամբողջ 1-ից մինչև հիմա այստեղ հիւանդացի են 280, մեռել են 176: Հիմա երակայացե՛ք Պետաւորական մի փոքրիկ քաղաք, իր հաշիւ 4 հազար բնակիչներով և հաշիւով, թէ ինչ անաղին աղիւս է կազմում մահվան դէպքերի թիւը բնակիչների թիւի վերաբերմամբ: Այստեղ բացի մի 2—3 հարկուր

երկաթուղային բանւորներից (որոնք մեծ մասամբ բանւորով գծի տարածութեան վրայ, այնտեղ էլ որոշեալ տեղերում ապրում են) և մօտ 50 հազի ծխատոպային գործարանում աշխատողներից, էլ բանւոր դասակարգ չը կայ Բաղուրի նման, այսինքն չը կայ այն տարրը, որտեղ ամենից առաջ է բուռն դնում և դարգանում խօշորային: Բաղաբն էլ համեմատաբար բնական լաւ դիմաւոր, բայց ինքի ստորոտին, ոչ-խիտ բնակութիւն, ծովի գոլմարար աղբեղութիւնը, մշտական քամի (օրը հովաքանդ և գետինը չորացնող, թէպէտ սաստկանալիս թող է անում և շուտ մրսեցնում է մարդուն), ջուրը բաւական մաքուր է, աղբիւրներից, որոնք լեռների տակից են դալիս և այնտեղից ջուրը խողովակներով բերված է քաղաք, գետինը աւելի քարոտ է, քան փափուկ առաջուտ: Ուրեմն քաղաքը համեմատելով մեր միւս քաղաքների հետ, բաւական լաւ բնական պայմաններին մէջ է գտնվում: Այսինքն մի հարց է դարձնում,—ինչ է պատճառը, որ խօշորային այստեղ այդքան դժնը տարաւ (5% բոլոր բնակիչների): Պատճառը՝ նախ քաղաքի առողջապահական վատ դրութիւնն է, երկրորդը՝ իսկապէս բժշկական օգնութեան և դէպիմեֆիկցիայի վերին աստիճանի անբաւարար լինելը: Չը նայած, որ սերտ յարաբերութիւնների և անդադար հաղորդակցութեան պատճառով Բաղուն ամեն օր նախազգուշական նշաններ, սիգնալներ են ուղարկում այս քաղաքին, օրինակ շոգնաւոր դեղին դրօշակով, հիւանդներ և դիակներ վերածելը ծովի ափի վրայ ամենքի աչքի առաջ, և այլն,—այնու ամենայնիւ համարեա ոչինչ չէր պիտի համարարական առաջն առնելու, կամ դեռ նրա ոյժը թուլացնելու համար: Երկրորդ մի հարցակ է 10 մահահարուկ վարձեցին 2 բժիշկ, դրանցից մէկին 2 օրից յետոյ ուղարկելով մի ինչ որ առաւ օրտեղից, միայն երեկ է վերադարձել,—մնաց մի ծերունի բժիշկ և մի ֆէլդշեր: Դէպիմեֆիկցիական ոչ մի միջոց չը կայ: Քաղաքային բժիշկն էլ անկարող լինելով մի կողմից քաղաքային հրահանգին հիւանդներին բժշկելու, միւս կողմից քաղաքի ամեն ծայրում գտնվող բաղմամբ հիւանդներին այցելելու, կամ նրանց բնակարանները և իրերը արտաքինաւոր, վերջ ի վերջոյ այն եռամիջ էլ, որ կարող էր ունենալ արդարաւ հասակում, այն էլ կորցրել է: Եւ չեմ ասում, որ այստեղի միակ դեղատանը դէպիմեֆիկցիական միջոցները շուտով հասան իրանց անոտում-ին և անհասարակ աղքատներին անմատչելի դնող էին ծածկվում: Մի կարևոր կէտ չը պիտի մտնայ. վարչութիւնը պիտի ինքն ձեռնամուրէ լինի և հենց թէկուզ հիւանդութիւնը վերջնաւորաց յետոյ բացի քաղաքի ընդհանուր սանիտարական դրութիւնը բարելոցելուց, նաև պէտք է անտահաւանել ամբողջ քաղաքը, կամ այն բոլոր տները, բաւկերը, ուր եղել է հիւանդութեան դէպք: Հապառակ դէպքում կարող ենք սպասել հիւանդութեան վերադարձին մի որոշ ժամանակից յետոյ (դիմաւոր եկող դարման), քանի որ յայտնի է, թէ Կոխի ստորակէտ քաղաքները տարիներով կարող են կենդանի մնալ և բաղմամբ մանդարար հիւթերի մէջ, ուրեմն նորից վարակել և համաճարակունմն առաջացնել:

Բժ. Գ. Թաղուտանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՍԱՋԵՏԻՑ

Օգոստոսի 12-ին

Օգոստոսի մէկից անկող հիւր-խօշորային Նոր-Բասաճէտ էլ մուտք գործեց և մինչև այժմ տարաւ 10 դո՛ւ: Խօշորային մեղ մօտ բերեցին Երևանից, որի հետ շատ մեծ յարաբերութիւն ունի մեր ժողովրդը: Ստոր տեղ գտնվող համարեա բոլոր նոր-քաղաքային ամեն բան ու գործ թողած՝ հաւաքվեցան իրանց հայրենիքում խօշորային ճանկերից աղտոտ միայն համար: Բայց քաղաքում և թէ դիմաւորում խօշորային տարածմանը ապրելը դնելու համար մեր դաւաճ կաւալարից ոչ չէ Գորտն և միայն բժիշկն ու Բո-դիսով մեծ ջանք են գործ դնում, նորիններին խիղիւր անտահաւանութեան են կենթարկում: Քաղաքի հիւանդացիները կողմի վրայ հիւանդացիները վարձեցին, որտեղ ամեն կերպ բաւականութեան են տալիս հիւանդին առողջացնել աշխատելով: Հիւանդանոցը պահպանվում է մասամբ քաղաքապետական դրամով և մասամբ պ. Գորտնէի նախաձեռնութեամբ խանութատերերից հաւաքած կամաւոր նուէրներով: Հիւանդանոցի այցելում է արիւն, Գորտնէ, ինչպէս որդրման քայլ: Բաղա-

բիս շուկայի համար երկու տեղ արտաքինացիներ են շինվում: «Խաչեր» ասված տեղից աղբիւրների ջուր են բերում. քաղաքը բաժանված է 8 սանիտարական մասերի, որոնց վրայ պիտի հանկն ծառայողները և ընտրված սանիտարները: Վարձած են սայլեր փողոցների աղբերը մաքրելու համար:

Պ. Գորտնէի կարգադրութեամբ կենսովկա դիւքում բոլոր իշխանները փակված են, բացի գիւղի հեղեղում գտնվող մի հատ իշխանից, ուր եկողներին կանոնաւոր արտահանութեան ենթարկելով նոր բաց են թողնում:

Տեղացի հարուստ պ. Խաչատուր Բունիաթեան իր սեփական միջոցներով հայոց ուսումնարանի սրահում ձրի թէյատն է բաց արել աղքատ ժողովրդի համար: Թէյատնը յաճախում են օրական 300—500 մարդ. բացի դրանից մօտ 100 չքաւոր ընտանիքների համար էլ առան է ուղարկում թէյ և չաքալ: Թէյատնը ծառայում են տեղիս խնայողները երիտասարդները՝ հերթով: Յանկայի է, որ մեր միւս հարուստներն էլ դո՛ւն հենց իրանց օգտի համար օրինակ վերցնեն պ. Բունիաթեանից և գործին ձեռնամուրէ լինեն: Այսում են որ պ. Գորտնէն աշխատում է ձրի ճաշարան ևս բացանել այստեղ:

ՆԱՄԱԿ ԱՌԱՎԱՐԱՔԻՑ

Օգոստոսի 2-ին

Խօշորային արդէն ճարակել է Ախալքալաքի գաւառը: Չը նայելով երիտասարդութեան եռանդուն աշակցութեան, չը նայելով քաղաքացիների առաւանակուն նախաբանութեան յօգուտ աղքատների, որը մի երկու օրվա մէջ հասել է 600 ռուբլու, և դեռ շարունակվում է, այնու ամենայնիւ քաղաքի տարեկանը մեծանում է շարունակ այն հանգամանքի, որ սեղանիս բացի գաւառական բժիշկից ուրիշ ոչ մի բժիշկ չը կայ, եթէ չը հաշուեք դիւնորականը, որը այստեղ անմիջական նշանակութիւն չէ կարող ունենալ: Ընմ բժիշկ թամաշեան, որը խոստացել էր ամսական 300 ռուբլով դաւու, դեռ չէ եկել: 100-ից աւելի գիւղեր ունեցող Ախալքալաքը միթէ կարող է բաւականաւոր մի բժիշկով, եթէ հիւանդութիւնը տարածվի և այլ դիւնորներ:

Հանգանակած գումարով քաղաքի աղքատներին պիտի բաժանվի աղբուր, սապոն և թէյ ու չաքալ (իսկ որտեղից պիտի փայտ ճարեն ողորմելիները, որ կերակուր պատրաստեն):

Բարեգործական ընկերութիւնը 200 ռ. նպատակեց, տեղիս խորհրդի որոշմամբ 100 ռ. փողով է ստացվելու, իսկ հարկեր բոլորը դեղերը: Մենք խորհուրդ ենք տալիս այդ դեղերը անպատճառ գիւղերում տարածել և որքան հնորակալութեան արժանի կը լինի տեղիս երիտասարդութիւնը, մի այսպիսի ճգնաժամում, երբ ժողովուրդը իր հաւատը դէպի բժիշկները միանգամայն կորցրել է, աշխատել այդ հաւատը վերականգնեն: Իսկ կը լինի եթէ երիտասարդները, թողնելով քաղաքի սահմանափակ շրջանը, իրեն ժողովրդի կրթված և հասկացող գաւառական, աշխատելու ջանքերով ժողովրդի տնտեսաւորութիւնը, և բարձրացնել գիւղական պատիւը և ժողովրդին խօսքով ու գործով բերելն անմիջական արդիւնաւետ օգուտ:

Մենք խորհուրդ ենք տալիս Ախալքալաքի երիտասարդութեան բաժանվել մի քանի խմբերի և առն ու կրակի օրերը դասախօսութիւններ կարգաւ դիւնորում խօշորային և նրա առաջն առնելու միջոցների մասին: Այստեղ, քաղաքում ևս կիրառելի օրերը, մեծ քանակութեամբ գիւղացիներ են հաւաքվում. նոյրը կարելի է անել և քաղաքում:

Գաւառից դիւնորութիւններից մէկն էլ այն է, որ գիւղերը միմեանց մօտիկ լինելով, մի օրում մի քանի գիւղ կարելի է անցնել: Ժողովուրդը խորհուրդում է խաւարի և աղիտութեան մէջ, նա լուսւ է խօշորային հրէշաւոր անոտը և այն հրէշաւոր առեւտրիները, թէ խօշորային աղիւր վտանգաւոր են բժիշկները և բժշկականութիւնը... Ոչ մի ստացող տեղեկութեան, ոչ մի անկեղծ պատկեր, ոչ մի օրտեղից անհատ, չէ պատահում մեր ժողովրդի ստորին խաւը, որը բացատրել, համակցել նրան, որ խօշորային այնքան էլ սարսափելի բժիշկները այնպէս է հրէշաւոր չեն, որպէս նրանց հանցանքներն են... Բարձրեք մտնել ժողովրդի մէջ և հասկացնել նրան համարութիւնը աշխատանք այս տաղանապալի ժամին սպիտակ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 օգոստոսի: Նոյս Կայսերական Մեծաթիվները թագաժառանգ Յեսարելիչի և միւս Օրոտաժառանգ Ուրուց ճիւղի վերադարձան Պետերբուրգ: Թագաժառանգ Յեսարելիչի նախագահութեան ներքոյ եղած մասնաժողովը գնեց աւելի քան 42.000 ձիեր, որոնցից խաղաքանչիւրը մօտ 30 ռուբլի. ձիաները ուղարկուեցին 11 սովետական շահանգները և բաժանուեցին գիւղացիներին 25-ական և 15-ական ռուբլի խաղաքանչիւրին: Տեղական իշխանութիւնները ստացած տեղեկութիւններին նախընտրեցին ձիաները շատ լաւ են, գիւղացիք ընդունել են խորին շնորհակալութեամբ, իբրեւ նշան թագաժառանգ Յեսարելիչի առանձին ստորաժողովեան ղեկի իրանց ծանր դրութիւնը: Ներէկ ներքին գործերի մինիստրը այցելեց այստեղի հիւանդանոցները մինը, ուր պարկած էին շատ խօլերայով հիւանդներ: Մինիստրը դիտեց ամբողջ հիւանդանոցը, ծանօթացաւ պահպանութեան եղանակներին և հարցնելով թէ բժիշկներին և թէ հիւանդներին, սիրտ տալով վերջիններին: Ներէկ պրոֆէսոր Վիլիսով վերադարձաւ Բերլին: Կայսրանու իրան ճանապարհ էին դնում ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, շատ բժիշկներ և գիտնականներ: «Правда. Вест.» լրագիրը ասում է, որ Վիլիսով ճարտար է ընկաւ, տանելով իր հետ, ինչպէս նա ինքն յաճախ ասել է, իրան ցոյց տուած հիւանդանոցի համար շնորհակալութեան հետ միասին, աւելի արդարացի և համակարան հայեացք ղեկի Ռուսաստանը, քան այն, որով գալիս են մեզ մօտ արևմտեան հիւրերը, ունենալով միշտ մի յայտնի չափով նախապաշարմունք: Պետերբուրգում օգոստոսի 20 և 21-ին հիւանդացիք են 133, մեռան 43, առողջացել են 62: Ներքին գործերի մինիստրը թողարկեց Պետերբուրգում հանգանակութիւն սկսել ապահովելու ժամանակաւորապէս մայրաքաղաքում ապրող այն մարդկանց երեխաների կենսքը, որոնք կը մեռնեն խօլերայից: Պետերբուրգի լուսաւորութեան մինիստրութեան բարձրագոյն և միջնակարգ արդան և իշխան գործընկերակուսումը և ընդունելութեան քննութիւնները սկսվելը յետաձգված է մինչև սեպտեմբերի 15-ը: Պետերբուրգում օգոստոսի 22-ին հիւանդացան 121, մեռան 31, առողջացան 76: Պարսկաստանի Արշաքի քաղաքը ուղարկված բժիշկների տեղեկութիւններին նայելով, ոչ մի հիւանդութիւն

«Նարա» ամսուով պատկզ չը կայ: խօլերան դարձեց և քնակիները վերադարձան: «Նարա» հարկ և առևտրական դիտումներով: ՄՈՍԿՎԱ, 23 օգոստոսի: Ներէկ պրոֆէսոր Կայսերական մեղէն մէջ բացվեց առաջին, օգոստոսական-բուսական-կենդանաբանական ժողովը, նախագահութեամբ Բրուզինի. ժողովին եկել են համալսարանական քաղաքների և գիւղատնտեսական հիմնարկութիւնների ներկայացուցիչները. ժողովի պարապմունքները կը տեւեն մինչև սեպտեմբերի 1-ը: Ներէկ սրտի պայթիւնից մեռաւ Կոնգրեսի անդամ, Ֆրանսիական արքունական ճանապարհների գլխավոր Սանդր: ՊԱՐԻՉ, 23 օգոստոսի: Այստեղ խօլերան մի փոքր սաստկացաւ: Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՄԱ Օգոստոսի 21-ին

Լօգոսի վրա	10	Ֆունտ արժէ . .	98	ր.	85	հ.
Բերլին վրա	100	մարկ	48	ր.	55	չ.
Պարիզի վրա	100	ֆրանկ	39	չ.	27	1/2
Ռուսի		արժէ	7	չ.	90	չ.
Մարտի կուպոններ			158	չ.	—	չ.
Արժաթ			1	չ.	10	չ.
Բորսայի դիվիդենդ			4	չ.	5	1/2
Պետ. բանկի 5% տոկոս	1	շրջանի	103	չ.	37	չ.
		2-րդ	102	չ.	75	չ.
		3-րդ	—	չ.	—	չ.
		4-րդ	—	չ.	—	չ.
		5-րդ	—	չ.	—	չ.
		6-րդ	102	չ.	75	չ.
6% ռուսիայ ընդհա			161	չ.	—	չ.
4% ռուսիայ փոխառութիւն			—	չ.	—	չ.
Արեւելեան 5% փոխառ.	1-ին	շրջ.	—	չ.	—	չ.
		2-րդ	102	չ.	12	չ.
		3-րդ	104	չ.	62	չ.
Ներքին 5% առաջին փոխառութիւն			235	չ.	25	չ.
		երկրորդ	222	չ.	25	չ.
Պետական երկաթուղային ընդհա			103	չ.	75	չ.
5 1/2% ընդհա			—	չ.	—	չ.
4% ներքին փոխառութեան			95	չ.	—	չ.
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի			102	չ.	—	չ.
4 1/2% գրաւական թղթեր կարգած			—	չ.	—	չ.
Վրաս. թղթ.			193	չ.	25	չ.
5 1/2% վրայակ. գիւղ. հող. բանկի			105	չ.	62	չ.
4 1/2% գրաւական թղթեր կարգած			—	չ.	—	չ.
Փոխ. կրեդիտ. ընկեր. մուտք.			153	չ.	25	չ.
		թղթադ.	102	չ.	25	չ.
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			—	չ.	—	չ.
ընկերութեան օրինագրանները			102	չ.	—	չ.
Մոսկուայի քաղաք. օրինագրանները			101	չ.	25	չ.
Օրէսայի			102	չ.	—	չ.
Թիֆլիսի			—	չ.	—	չ.
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի			—	չ.	—	չ.
		Փոխ. կրեդիտի	—	չ.	—	չ.
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը			—	չ.	—	չ.
խաղաղ է:			—	չ.	—	չ.

Խաղաղը-Հրատարակող՝ ԳԻՐԿՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որը ընդունված է ուսուցչական ցուցակի Բ. կարգի մէջ և մի քանի տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է հայոց եկեղեցական դպրոցները մէկում լինել ուսուցչուհի: Հետեւեալ առարկաներից. թուրքագիտութիւն, զօհրութիւն, ձեռագործութիւն, և կարու-ձե Գլխավոր մեղքով: Նաեւ կարգապահ վարժուհի, շարժական 20—24 դասի պարտաւորութիւնով: Գիմը բաժնու. տէր-կուսանդին 8 էր-Ստեփանեանցին: 1—4

ՍԱՐՈՒՇԵՆ զիւղի միջոցաւ ծխական ուսումնարանի համար հարկաւոր է մի ՈՒՍՈՒՑԻՉ, ուսուցչական արտօնութիւնով, որը պիտի աւանդէ բոլոր առարկաները բացի կրօնից, վարձ կը ստանայ տարին հինգ հարիւր ռուբլի, առանձին, ծառայ և վառելիք ձրի: Ուսուցչը ըստ ցանկութեան հիմնադրի Ս. Կիւրեան Գլխավոր աղջկի պիտի լինի ամուսնացեալ և ըստանալով թող ուրիշ ցանկացողները բարեհաճեն իրանց ցանկութիւնը ինչ յայտնել մինչև մէկ սեպտեմբերի: Առաջնորդ վիճակին Արցախայ՝ Ս. Կարապետ, եպիսկոպոս: 1—2

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՆԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՐԴԸ հրաւիրում է ցանկացողներին ընդունել ժողովարանի ԲՈՒՖԵՏԻ պահելը 1-ն յունվարի 1893 թ. ևսկանի երեք տարի ժամանակով: Զանկացողները կարող են այդ մասին ներկայացնել խորհրդին զրաւոր խորհրդներ մինչև ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ը: Պահանջվում է մի հազար ռուբլի գրաւական:

Մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար հարկաւոր է գիմել խորհրդին: № 96 1—2

НѢМЕЦКАЯ ГОСТИНИЦА
HOTEL NIEMIECKI, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅ՝ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոմերներ. օրոնց սարք ու կարգը ամենալաւ արաասահմանա հիւրանոցների սենականներին է նման: Նոմերների վրեջ 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն Մշակ և Նոր-Գործ լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ընտանիք, տեղեկութեւ, քաղցրեղէնների կանտին, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում: (№ 21) 33—130 (2)

Доволено цензурою, Тифлисъ, 24 Августа 1892 г.

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուրքագիտութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքագիտութիւն համընկ զրա, 5) Առևտրական թղթագիտութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլովակով, Ազգաւարդ ֆրիդմանի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազորայա փողոցների անկիւնում: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ Եղբ. Չովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Փառաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին:—ВѢ ТИФ-ЛИСѢ, С. П. Мануэляндю.

1—25 (Ե. Շ.)

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՆԵՐ
Յօդուտ Հաւաքարի ձրի թէյատան.
Գրամով.
Մ. Նուրափարան 8 ր. Մ. Արազով 1 ր. Ս. Թարխանյան 1 ր. Ա. Պապով 1 ր. Գ. Գալստեան 1 ր. Ն. Խալաթեան 1 ր. Գ. Գալով 1 ր. Բեզ-բուկով 1 ր. Ա. Բաղդասարեան 1 ր. Կապան-գաշվիլի 1 ր. Ս. Բորիով 1 ր. Գ. Միլոտեան 1 ր. Ա. Գալստեան 1 ր. Պ. Գալստեան 1 ր. Մ. Արազով 1 ր. Մ. Խալաթեան 5 ր. Խ. Խալաթեան 1 ր. Ա. Արազով 2 ր. Սովետով 1 ր. Գ. Արազով 1 ր. Վ. Գալով 1 ր. Լալիով 1 ր. Արշ. Թայ-րեան 3 ր. Ս. Բեքա-Յալիով 1 ր. Անյայտ 1 ր. Ս. Պապով 5 ր. Ե. Խալաթեան 1 ր. Ե. Թաշով 2 ր. Անյայտ 1 ր. Ե. Բաղդով 1 ր. Գ. Օհան-ջանեան 1 ր. Բաղդեան 1 ր. Օհանով 3 ր. Սուքեանեան 5 ր. Պապովով 20 ր. Երանոսեան 40 ր. Կալաթեանի 1 ր. ՆՆՆ. 1 ր. Մ. Թիւր-նեակ 1 ր. Օսեան 1 ր. Ս. Արազեան 1 ր. Ա. Ներսիսեան 1 ր. Ն. Խալաթեան 3 ր. Պ. Արի-թեան 1 ր. Մ. Դեմաթեան 2 ր. Պ. Արազով 3 ր. Ե. Թիւրեան 3 ր. Բժիշկ Թարխանյան 7 ր. Գ. Կալով 1 ր. Ա. Գալստեան 1 ր. Անյայտ 1 ր. Բ. Խիթով 1 ր. Լ. Լ. Կալթեան 3 ր.:

ԳՈՐԴԱՅԻ ԳՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԱՆԻՈՐ ԵՆ ՎԱՐՈՒՅԻՆ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉ, 500-ական ռուբլի ռոմիկներով: վարժուհին ցանկալի է, որ աւարտած լինի կամ արքունական կամ հայոց միջնակարգ դպրոցներում: Պայմանների համար դիմել Սեբեռնականին, շահաւա-մաստիկի դարպարան՝ Միշին փողոց: № 94 3—4

Միշին փողոցի վրա կրկնակի և համարվում է:

Մեղրից և խաղաղ պատրաստված մայր-կուրսով և կոնֆիտներ:

Լ. Գ. ՊԵՏԵՐԲՈՐԳ, ԲՈՐՄԱՆՈՒՄ ՄԵՋ:

Քիմիական, վերլուծութիւն և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պի-պրատները չեն պարունակում առողջ-կան համար որ և է փառաւոր քաղա-դրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց արդեա-ծակները թոյլատրված է:

Գիմ. շէք 1 ր. 25 Կ. և 2 ր. 40 Կ. կոն-ֆիտները 30—50 կոպ.:

Գլխավոր պահեստ Ռուսաստանում՝ ՊԵՏԵՐԲՈՐԳՈՒՄ, Կոլոբայեա 18/13

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր գիւղա-գործարաններում և գիւղատնտեսական (91—№ 127) 13—16 (ամսի 11 և 25)

ԵԼԵԿՏՐՈՆ ԼՈՒՍԱՆՈՐՈՒԹԻՒՆ
Ոչ մի հասցենք տարածութեան վրա.
ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐԳԵԼԸ.
Էլեկտրական նշաններ.
ՋԱՆԳԱԿՆԵՐ
ԳԱԼՎԱՆՈՒՄԱՍԻԿԱ.
Էլեկտրիկ.
Արժուրաւորներ, Էլեմենտներ.
ՇԱՆՔԱՐԵԼԵՐ.
Նախահաշիւներ և ծրագիրներ ձրի-արար.
(91—№ 5)

ԵԼԵԿՏՐՈՆ
Գլխավոր և կրկնակի և բանկային
ԳԼԵԲՈՎ, Եղայրներ
ՐՈՍՏՈՎ (ԳՈՒՆԻ ՎՐԱ)
ՄԵՃ Սաղօլայա փողոց,
24.
ՐՈՍՏՈՎ (на Дону)
БР. ГЛЕБОВЫ
Большая Садовая, 24.
79—100 (Ե. Շ.)

Типография Канцел. Главн. Гражданск. частью на Кавказъ, Лорисъ-Мелиновскя ул., д. 833.